ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐ

ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ

ՏԵՂԱԴՐԱԿԱՆ. — Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքը հիմնուած է Պարսկաստանի Ասպահան քաղաքին մօտ, ժ.դ. դարուն սկիզբը, Ջուղայէն տարագրուած Հայոց կողմէ, ի յիշատակ իրենց Հին Ջուղայի համանուն վանքին։ Նախապէս եղած է պարզ և անփառունակ շինուածք մը, որ կէս դար ետքը փոխարինուած է ընդարձակ և փառաւոր կառուցումներով. — Հմմտ. Լ. Գ. Մինասեան, Իրանի Հայկական վանքերը, Թեհրան, 1971, էջ 39-71։ Պատկերագիրք Ս. Ամենափրկիչ վանուց, Նոր Ջուղա, 1975։

ՊԱՏՄԱԿԱՆ. — Նոր Ջուղայի և Ամենափրկիչ վանքի առաջնորդներէն կը յիշենք տասնեակ մը, հնագոյններէն, և կու տանք հակիրճ տեղեկութիւններ։

1. — Մեսրոպ Արքեպիսկոպոս, 1605-1622։

2. — Խաչատուր Արք. Կեսարացի, 1623-մ. 1646, աշակերտ Մովսէս Տաթևացիի։ Վանքին մէջ հաստատած է տպարան և 1641ին հրատարակած է «Հարանց Վարք» գիրքը։

3. — Դաւիթ Արք. Ջուղայեցի, 1651-մ. 1683, աշակերտ կեսարացի Խաչատուր վարդապետի։ Եպիսկոպոս կը ձեռնադրուի Երուսաղէմի մէջ ձեռամբ Փիլիպպոս Կաթողիկոսի (1651)։ Վանքը կը վերաշինէ ինը տարուան աշխատանքով (1655-1664)։ Կը կառուցանէ հոյակապ նոր եկեղեցի։ Հոգ կը տանի վանական դպրոցին և կը հասցնէ քսանևինը աշակերտներ, որոնցմէ ինը եպիսկոպոս, ինը վարդապետ և տասնմէկ քահանայ։

4. — Ստեփանոս Եպս. Ջուղայեցի, 1684-մ. 1698, աշակերտ Դաւիթ վարդապետի։ Վանքին տպարանը աւելի ևս կը կարգաւորէ, և 1688ին լոյս կը տեսնէ իր յօրինած Հակաճառութեան Գիրքը՝ ընդդէմ պապականաց։

5. — Աղեքսանդր Եպս. Ջուղայեցի, 1699-1706, աշակերտ Ջուղայեցի Դաւիթ վարդապետի։ Բարձր անտեսութեամբ կը կառավարէ իր թեմն ու վանքը, և 1706ին կաթողիկոս ընտրուելով կը մեկնի Էջմիածին։ Իր առաջնորդութեան շրջանին (1702) կառուցուած է վանքին հոյակապ զանգակատունը. — Իրանի Հայկ. վանքերը, էջ 63։

6. — Մովսէս Եպս. Ջուղայեցի, 1706-1725։ Կը շինէ վանքին Առաջնորդարանը։

7. — Դաւիթ Եպս., Բ., 1725-1728։ Եղած է նախանձախնդիր՝ քահանաներու պարկեշտ կենցաղավարութեան, և եկեղեցական արարողութիւններու կանոնաւոր կատարման։

8. — Առուծատուր Եպս. Ֆահրապացի, 1729-1745։ Իր հեղ և խաղաղասէր բնաւորութեան պատճառով իրեն տուած են «Ազատնի» մականունը։

9. — Պողոս Եպս., 1748-1752։ Եռամեայ պաշտօնավարութենէ ետք կը պարտաւորուի հրաժարիլ, դատապարտելի ընթացքի հետևած ըլլալուն պատճառով։

10. — Գէորգ Եպս., 1754-1768։ Բրնաւորներու հարստահարութեանց չդիմանալով կը հեռանայ Ջուղայէն և կ'երթայ Բասրայ, և քանի մը տարի այնտեղէն կը վարէ իր առաջնորդական պաշտօնը. — Հմմտ. Պատմ. Նոր Ջուղայու, Հատոր Երկրորդ, Յարութիւն Տէր Յովհաննէսեանց, Նոր Ջուղայ, 1881։

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ. — Ամենափրկչեան վանքին մէջ, տպարանի հաստատութենէն առաջ և յետոյ, անպակաս եղած են գրիչներ, որոնք պարապած են եկեղեցական և այլ մատեաններու ընդօրինակութեամբ։ Անոնցմէ կրնանք յիշել հետևեալները։

Այս ցանկը սպառիչ չէ կը կարծենք, այնուհանդերձ յոյժ տպաւորիչ է իր քանակին մեծութեամբ։ Հազիւ թէ գտնուի ուրիշ թարգմանիչ մը, որ նման ծաւալուն արդիւնքով կարենայ մրցիլ Խաբերդցի Ղուկաս վարդապետին հետ։

Ն. ԱՐՔ. ԾՈՎԱԿԱՆ

digitised by A.R.A.R.@

Ա. — Յակոբ Երէց Ջուղայեցի, 1622ին, տէր Յաւրիկի խնդրանքով կը կազմէ հին Աւետարան մը, օրինակուած Ազարիա Դպիրէն. — Ձեռ. Ն. Ջուղայի, Թ. 160։

Բ. — Թադէոս Դպիր, աշակերտ Սիմէոն վարդապետի, 1648ին օրինակած է մէկ Մեկնութիւն Վեցօրէից, իր ուսուցչին համար. — Գ. Արք. Յովսէփեանց, Հաւուց Թառի Ամենափրկիչը, էջ 94։

Գ. — Բարսեղ Կրօնաւոր, Դպիր, 1654–1673, օրինակած է,

1. — Աւետարան, 1654–1655ին. — Վատ., էջ 915։

2. — Նարեկ, 1665ին. — Բզմ. Թ. 32։

3. — Աւետարան, 1669ին. — Ձեռ. Նոր Ջուղայի, Թ. 137։

4. — Աւետարան, 1670ին, տանուտէր Անդրէասի պատուէրով. — Ձեռ. Նոր Ջուղայի, Թ. 151։

5. — Աւետարան, 1673ին, «ի խնդրոյ հաւատացելոց». — Ձեռ. Նոր Ջուղայի, Թ. 145։

Դ. — Յակոբ Դպիր, աշակերտ Աստուածատուր Դպրի, 1662ին մասնակցած է Աստուածաշունչի մը ընդօրինակութեան. — Ձեռ. Նոր Ջուղայի, Թ. 1։

Ե. — Անտոն Քահանայ, Դպիր, 1666ին օրինակած է Շարակնոց մը. — Բզմ. Թ. 41։

Զ. — Միքայէլ Կրօնաւոր, Դպիր, 1667ին օրինակած է,

1. — Մեկնութիւն Մատթէոսի, Ն. Շնորհալիի,

2. — Մեկնութիւն Ղուկասու, Իգնատիոս Վարդապետի,

3. — Մեկնութիւն Յովհաննու, Նոնա Սարկաւագի. — Ձեռ. Ն. Ջուղայի, Թ. 375։

Է. — Աղազար Դպիր, 1669ին օրինակած է Աւետարան մը, Խօջայ Աւետիքի խնդրանօք. — Ձեռ. Ս. Յ. Թ. 2388։

Ը. — Մկրտիչ Քահանայ, Դպիր, 1671ին օրինակած է Աւետարան մը, Նիկողայոսի փափաքով. — Ձեռ. Ն. Ջուղայի, Թ. 142։

Թ. — Յակոբ Քահանայ, Դպիր, 686ին օրինակած է մէկ Գիրք Առաքինութեանց. ստացող՝ Աղեքսանդր Վարդապետ. — Ձեռ. Նոր Ջուղայի, Թ. 483։

Ժ. — Արիստակէս Երէց, Դպիր, 1686–1687ին օրինակած է Ճաշոց մը, ստացող՝ Աղեքսանդր Քարեփիսկոպոս, ծաղկազարդող՝ Հայրապետ Վարպետ. — Ձեռ. Նոր Ջուղայի, Բ. Հատոր, Թ. 142 և 143։

ԺԱ. — Աստուածատուր Արք. Յովհաննիսեան, Ջաֆրապատցի, Դպիր, 1689–1703, օրինակած է,

1. — Ժողովածու, 1689ին. — Ձեռ. Նոր Ջուղայի, Թ. 471։

2. — Գանձ Վկայութեանց Վարդապետաց, օրինակած է 1699ին. — Ձեռ. Նոր Ջուղայի, Բ. Հատոր, Թ. 59։

3. — Ժողովածու, Գիրք Բնազննութեան, եւայլն, 1703ին. — Ձեռ. Նոր Ջուղայի, Թ. 581։

ԺԲ. — Յովհաննէս Վարդապետ Ջուղայեցի, 1707ին գրած է «Յաղագս Ուղիղ Դաւանութեան Հայոց» յարջարջուած գիրքը. — Ձեռ. Ս. Յ. Թ. 1610։

ԺԳ. — Աստուածատուր Քահանայ, Դպիր, որդի Թիրվանդի, 1709ին օրինակած է Գանձարան մը. — Ձեռ. Նոր Ջուղայի, Թ. 302։

ԺԴ — Յակոբ Դպիր, 1710ին օրինակած է Աստուածաշունչ մը. ծաղկող՝ Աւետ Նախասարկաւագ. — Սարգ., 15։

ԺԵ. — Աւետիս Արք. Քհն. Դպիր եւ Ծաղկող, 1715–1748, օրինակած և ծաղկած է,

1. — Ասենի Ժամագիրք, 1715–1716ին, Դաւիթ Եպիսկոպոսի փափաքով. — Ձեռ. Նոր Ջուղայի, Թ. 267։

2. — Մաշտոց Ձեռաց. — Ձեռ. Նոր Ջուղայի, Թ. 337։

3. — Ճաշու Աւետարան, 1717ին, ստացող՝ Մովսէս Եպս. — Ձեռ. Նոր Ջուղայի, Թ. 152։

4. — Ասենի Ժամագիրք, 1745ին, ստացող՝ Ջուղայեցի Աստուածատուր Խալդարեանց. — Ձեռ. Ս. Յ. Թ. 2244։

5. — Ասենի Ժամագիրք, 1748ին, ստացող՝ Խաչատուր Վրդ. — Ձեռ. Նոր Ջուղայի, Թ. 270։

ԺԶ. — Դանիէլ Վարդապետ, 1716ին օրինակած է Բժշկութիւն եւ Տոմաբանութիւն մը. — Բանասէր, 1905, էջ 17։ B. Nat., Թ. 314։

Ն. ԱՐՔ. ԾՈՎԱԿԱՆ

digitised by A.R.A.R.@